ՎԵՐԱԾՆՆԴԻ ՈԳՈՎ

Մեր այսօրվա Հայաստանը Պատմական Հայաստանի մանրակերտն է: Այս պատկերավոր արտահայտվելու ցանկությունից ասված խոսք չէ, իրականություն է: Որ այդ իրոք այդպես է, բոլորին է հայտնի: Ես ի նկատի ունեմ ոչ միայն այն, որ մեր անհեռատես առաջնորդների գործելակերպով մեր հնադարյան հայրենիքի մեծագույն մասը՝ գրեթե 70-80 տոկոսը մնաց թուրքերին, հայ բնակիչների մեծ մասը զոհ գնաց միջնադարյան ինկվիզիտորների յաթաղանին, մի մասն էլ ցրվեց աշխարհով մեկ ու գոյատևեց, այլ նաև այն, որ մեր փոքր հողակտորի վրա հայրենադարձ հայերի համար ստեղծված բնակավայրերը անվանվել են այդ բնակիչների նախահայրենիքի անուններով: Դրանով, թերևս, անմոռաց են պահում այդ անունները, այլև հոգու մեջ հայրենիքի պատրանքն են ջերմացնում, փայփայում, կարոտն առնում:

Եթե առաջներում ունեինք մեկ «Նոր Նախիջևան», ապա այսօր «նոր» ածականը շատ պատմական տեղանունների համար դարձել է նախդիր: Ահավասիկ՝ Նոր Արաբկիր, Նոր Խարբերդ, Նոր Հաճն, Նոր Գեղի, Այնթափ, Մուսալեռ, մայրաքաղաքի մեծ թաղամասերը՝ Զեյթուն, Մարաշ, Կիլիկիա և այլն: Սրանք, ըստ էության, նախորդների վերածնունդն են, նրանց վերապրումը:

Վերջին տասնամյակների ընթացքում կտրվել էր մեր ժողովրդի ներկան իր դարավոր անցյալին կապող թելը, մշակույթի հաջորդականությունը դադարել էր որպես այդպիսին լինելուց: Անցյալն ու ներկան շաղկապելու բոլոր փորձերը կասեցվում էին հնարավոր ու աննախադեպ բոլոր միջոցներով: Այդպիսի գործողությունները նորություն չէին մեր ժողովրդի համար. այդպես էին վարվում միջնադարի այն բոլոր նվաճողները, որոնք տիրելով երկրին, ճորտացնելով բնիկներին, պարտադրում էին մոռանալ իրենց լեզուն, հավատն ու մշակույթը, ստիպում էին մտածել ու խոսել տիրողների լեզվով:

Մեր երկրում իրականացվող վերակառուցման քաղաքականությունը տարբեր միջոցներով ու ձևերով փորձում է արմատավորել դեմոկրատիան, վերականգնել այն,

ինչը բնական է ու անհրաժեշտ ժողովրդի հոգեկան ու առօրյա կյանքում, պիտանի՝ մատաղ սերնդի մարդավայել դաստիարակության համար:

Խորհրդային կառավարությունը հնարավորություն ընձեռեց մասշտաբայնորեն նշել ռուսաց կողմից քրիստոնեությունը ընդունելու հազարամյակը: Եկեղեցու տնօրինությանը վերադարձրեց շատ եկեղեցական շինություններ ու համալիրներ, որոնք նորոգվելով, կսկսեն գործել: Նման հնարավորություններ ստացան երկրի բոլոր ժողովուրդները, այդ թվում և մենք:

Մեր ծայրագույն պատրիարք, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա 1989 թ. սկզբներին որոշում կայացրեց ի նշանավորումն հայոց կողմից քրիստոնեությունը պետականորեն ընդունելու 1700-ամյակի, որ լրանում է 2001 թվականին, մեր մայրաքաղաք Երևանի կենտրոնում որպես Արարատյան թեմի գլխավոր եկեղեցի, վերականգնել Զվարթնոցը իր ճարտարապետությամբ: Ու թեև այդ որոշման իրականացումը զանազան առիթներով դանդաղում է, սակայն այն չի կարող չիրագործվել:

Հոդվածագրիս կարծիքով այդ պետք է համարել շատ կարևոր գործի սկիզբը միայն:

Բանն այն է, որ մեր շատ բնակավայրերում գոյություն ունեցող եկեղեցիները մոտ անցյալում հիմնահատակ քանդվեցին: Եվ ահա նրանց փոխարեն, եթե կառուցվելու են նորերը, ապա այդպիսիք պետք է իրականացվեն ոչ նոր նախագծերով: Որպես կանխամտածված քայլ, պետք է վերակրկնվեն մեր այն մեծարժեք հուշարձանները, որոնք գտնվելով օտար տերությունների սահմաններում, որպես կանոն անխնամ մնալով, նաև արհեստական միջոցառումների հետևանքով կործանվել ու կործանվում են, անհետանում երկրի երեսից:

Նկատենք, որ մեր վաղ անցյալում՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ դարերում և հետո հայ ճարտարապետական հանճարը շռայլորեն բազմազան ու բազմաթիվ կոթողներ է երկնել ու հանձնել հետագա սերունդներին: Իհարկե, չի կարելի պնդել, թե այն, ինչ որ ստեղծվել է այդ ժամանակներում՝ մեր ողջ միջնադարում, անխտիր բարձրարժեք է ու նախընտրելի: Սակայն կան այնպիսիները, որոնց տիպը, հորինվածքը ժամանակի ընթացքում

այնքան են մաքրվել ավելորդություններից, ձևերը զուլալվել, ստացել են ադամանդի հստակություն ու փայլ: Ահա դրանցից մի որոշ քանակ արվեստի կատարելություններ են, գլուխգործոցներ ընդհանրապես:

Ժամանակը կատարելագործելուց զատ, ունի նաև կործանարար կողմ: Ժամանակը մաշում, մաշում, ի վերջո խարխլում է առողջ օրգանիզմը, դարձնում խոցելի, ենթակա փլուզման, անդիմադիր երկրաշարժային ցնցումներին ու հարվածներին:

Հայ ճարտարապետության գլուխգործոցների մեծ մասը լրիվ, կամ մեծմասամբ կործանված է. ամենևին էլ շատ չեն կանգուն գոյատևողները, հետևաբար մենք քիչ բան ունենք կատարյալ վիճակում ներկայացնելու, այլ ժողովուրդների բարձրարժեք ստեղծագործությունների շարքում դնելու ի տես մարդկության: Բայց չէ որ դրանք են մեր ժողովրդի երկնող ու ստեղծագործող ոգու անբեկանելի վկայարանները:

IX-XI դարերում մեր արվեստը մեծ վերածնունդ ապրեց, ստեղծվեցին անբասիր մեծագործություններ: Հետաքրքիր է, որ դրանց հիմքում առկա էր վաղ միջնադարի անուրանալի կնիքը, անսքող գործում էր հաջորդականության օրենքը: Ժամանակները ինչ որ խորհրդով կրկնվում են: Ինչպես երևում է, եկել է պահը նոր վերածնության: Պարտադիր չէ, իհարկե, որ դրանք նոր կմախք ու կեղև ունենան: Ոչ բոլոր սերունդներին է բախտ վիճակվում կերտելու աննախադեպ մեծ ստեղծագործություններ: Դադարներ են լինում, անցման շրջաններ: Նման պարագաներում պետք է դիմել արմատներին, սկզբնաղբյուրներին, վերցնել ամենայն բարձրարժեքը:ն

Մեր արվեստի ակունքները ցրված են պատմական հայրենիքի ողջ տարածքում, իսկ այդպիսին այլևս մերը չէ, ու ինչ կա այնտեղ, ենթակա է կորստյան, մոռացության, յուրացման: Արդ ո՞վ է հավատում, որ մեր Անին մեզ կվերադարձնեն, ո՞վ է հավատում, որ մոտ ապագայում այնտեղի հուշարձանները կարող են խույս տալ փոշի դառնալուց, ո՞վ կհավատա, որ գծագրերում դրոշմվածը իրական է եղել:

Ահա թե ինչու խիստ այժմեական է Անիի ու Պատմական Հայաստանի բոլոր բարձրաժեք հուշարձանները վերակրկնենք մեզ մոտ, ինչպես վերակրկնել ենք մեր պատմական տեղանունները: Հավերժորեն մեզնից խլվածը պետք է վերստեղծենք մեզ

մնացած այս հողում, այս է միակ հնարավորը: Միթե՞ այդպիսի ցանկություն չէր իրականացնում Շահնշահ Գագիկ Առաջինը Անիում վերակրկնելով Զվարթնոցը, որն այդ ժամանակ արդեն կործանված էր:

Եկել է ժամանակը սթափ նայելու իրավիճակին և հենց որ առիթն ու հնարավորությունը ներկայանում են, առանց ժամանակ կորցնելու, առանց անառիթ ձգձգումների իրականացնենք մեր երազանքը՝ մեր բնակավայրերում տեսնենք կանգուն ոչ միայն Զվարթնոցը, այլև Բագարանն ու Անիի Մայր տաճարը, հինգ գմբեթանի Առաքելոցն ու բոլորակ Ամենափրկիչը, հրաշագեղ Աբուհամրենցն ու անգերազանց Բախտագեղիկը, Հոնենցի տաճարն ու Հովվի եկեղեցին, և էլի ինչքա՜ն, ինչքա՜ն հրաշալիքներ: Հարստացնենք մեզ ու մեր հայրենիքը անգերազանց ունեցվածքով:

Հայտնի է, որ վարպետները Լենինականում կրկնել էին Անիի Մայր տաճարը: Այն, դժբախտաբար, 1988 թ. դեկտեմբերի 7-ին կործանվեց: Թվում է վատ չէր լինի, որ այդ եկեղեցին վերականգնվեր վարպետների և, անպայման ճարտարապետների համագործակցությամբ, որպես երաշխիք առավել կատարյալ տեսնելու այն: Այդ պատիվը, անկասկած պատկանում է լենինականցիներին… Առաքելոցը կարող էր տեղակայվել Կիրովականի Տարոն թաղամասերի հարևանությամբ, Բախտագեղիկը՝ Չարենցավանում, Բագարանը՝ Աբովյան քաղաքում, Հոնենցի եկեղեցին՝ Ստեփանավանում, Աբուհամրենցը՝ Սպիտակում, Խծկոնքի Սարգսի եկեղեցին՝ Լուսակերտում, Ամենափրկիչը՝ Եվրոպոլիսում:

Ահա այս ձևով մենք կարող ենք Անին «հետ ստանալ»: Ինչու միայն Անին, Մշո սբ. Կարապետը, Մարութա սարի սուրբը, Վարագավանքը, անկրկնելի Աղթամարը, Իշխանը, Օշկ վանքը, Խախու վանքը և մյուսները:

Այս հոդվածի նպատակը ահա այս էր: Թե չէ ահ ու դողով Ախուրյանի այս ափում, սահմանապահների դիտաշտարակների վրայի խոշորացնող հեռադիտակներով Անիին նայելով, ամեն անգամ նոր ավերմունքներ տեսնելով, դիմում են սրան-նրան, մնում անպատասխան:

Այսպես վարվելով մենք կկարողանանք մեզ մխիթարել այդ անկրկնելի կոթողների կանգուն հորինվածքը հազարմյա ապագային հանձնելով:

Մեր օրերում ո՞վ չի նախատինքով հիշում Երևանի եկեղեցիների քանդողներին: Օրինակ, Ամիրյան փողոցի վրայի ս. Աստվածածին եկեղեցին՝ հին չէր, բայց նրա մեծ նշանակությունը նաև այն էր, որ իր հատակագծով, արտաքին ծավալատարածական հորինվածքով նույնական էր մեր այդ տիպի շատ հին եկեղեցիների հետ, և քանի որ դրանք կործանված էին, իսկ ս. Աստվածածինը շատ ամուր էր կառուցված, նա ի վիճակի էր հեռավոր ապագային հասցնել մեր անցյալի այդ պատկերը:

Նկատի ունենանք, որ այս հոդվածում արծարծված մտքերը ոչ բոլորն են բաժանում. կան անհատներ, որոնք նպատակահարմար են համարում նոր եկեղեցիները կառուցել նոր նախագծերով, ոմանք էլ խորհուրդ են տալիս ընդունել «մոդեռն» ոճը: Դատում են այսպես. «թող մեր ժամանակակից ճարտարապետները իրենց ուժերը փորձեն նաև եկեղեցաշինության ասպարեզում»: Նրանք ակնկալում են ստանալ առավել դրական արժեքներ: Թե որքանով ռեալ է այդ, մեզ չի ոգևորում, քանի որ մեզ հայտնի են մոտ անցյալում, նաև մեր օրերում Երևանում և այլուր կառուցված նոր շինությունները, այդ թվում և Սփյուռքում կառուցված նոր եկեղեցիները:

Հարկ համարենք 20-րդ դարի 20-30-ական թվականների եկեղեցաքանդումներին հակակշիռ 21-րդ դարի նախաշեմից կենդանություն պարգևել մեր անգնահատելի հուշարձաններին:

Տիրան Մարության